ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆՈՒՄ

--

Գրական-Գեղագիտական Սալօնի երեկոյթը, որ կայացաւ ուրբաթ, հոկտ. 18-ին, նուիրված էր համազգային յօբելեանի վերջաբանութեան։

Հաւաքված էր մեծ բազմութիւն։ Շատերը կանգնած էին։

Երեկոյթին մասնակցելու եկել էին Էջմիածնից երեք պատուաւոր հիւրեր՝ Կարապետ եպիսկոպոս Տէր-Մկրտչեան, Գարեգին Յովսէփեան և Մեսրոպ Մաքսուտեան վարդապետները։

Երեքն էլ ճառախօսեցին զանազան առարկաների մասին։

Երեկոյթը բացվեց հ. Բենիկի ճառով, որը տպաւորիչ նախադասութիւններով և գեղեցիկ ձևակերպութիւններով ջատագովեց հոգևոր և բարոյական այն ոյժը, որը պարունակված է գրի դաղափարի մէջ և որը յաղթող է հանդիսացել ֆիզիկական ոյժի դիմաց։

Գարեգին վարդապետը խօսեց հայ գրչագրութեան մասին և հետաքրքրաշարժ օրինակներով ցոյց տուեց այն ճոխութիւնը, որ պարունակում է հայ ձեռագիր մատենադարանը գիտութեան պատմական-կենցաղագրութեան և գեղագիտական արուեստի համար։

Կարապետ եպիսկոպոսը խօսեց մի բո-

վանդակալից ճառ հայկական ուսումնասիրութիւնների մասին, կապելով ս. Թարգմանիչների ժամանակից սկսած մտաւոր գործունէութեան հետ։

Հայր Մաքսուտեան ֆրանսերէն և յունարէն լեզուներով արտասանեց երկու ճառ, որոնք արժանացան մեծ ուշադրութեան։

Այնուհետև կարճ երաժշտական մասից յետոյ, երբ վերսկսվեց ժողովը, խօսեցին Քալանթար, Երամեան, Սօլօվեան, Գառնիկ և Ռաֆֆի։

Երաժշտական բաժնում մասնակցեցին 1) տենօր երգիչ Միհրանեան, որ երգեց Pini-Corsi-ի «Romanzetta»-ն և Բիմակի-Կօրսակովի «Արևելեան բօմանսը», 2) Մուրադեան, որ երգեց «Կռունկ» և մի քանի եւրոպական երգեր։

Հայր Մաքսուտեան արտասանեց բանաստեղծական հատուածներ, որոնք ընդունվեցին հաճութեամբ։

Վերջում ժողովականները խմբագրեցին մի հեռագիր Ամենայն Հայոց Կաթողիկոսի անունով, որը ուղարկվեց ժողովի կողմից՝ նախագահող Բենիկ վարդապետի և Տ. Նազարեանի ստորագրութեամբ։ Ահա հեռագրի պատճէնը. «Գրական-Գեղագիտական Սալօնի երեկոյթին ժողովվածները, լսելով մի շարք ճառեր նուիրված հայ այբուբենի 1500-ամեակին, յայտնում են Ձեր Վեհափառութեանն իրանց երախտագիտութիւնը Ձեր բարձր հովանաւորութեան և նախաձեռնութեան համար, որոնցով Ձեր Վեհափառութիւնը աջակցեց հայ ազգի մեծ կուլտուրական տօնին»։

Ի պատասխան այդ հեռագրի երէկ ստացվեց Էջմիածնից հետևեալ հեռագիրը.

«Բենիկ վարդապետին և Տիգրան Նազարեանին։ Շնորհակալ եմ։ Օրհնում եմ ձեզ և Գրական-Գեղագիտական Սալօնում բոլոր հաւաքվածներին՝ որդիական զգացմունքների արտայայտութեան համար։

«Գէորգ Կաթողիկոս Ամենայն Հայոց»